ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2023 թվականի N 184 - Ա

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայ ժողովրդական երգարվեստի ու պարարվեստի մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով դրամաշնորհի պայմանագիր:
2. Հաստատել՝

1) Հայ ժողովրդական երգարվեստի ու պարարվեստի մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Հայ ժողովրդական երգարվեստի ու պարարվեստի մշակութային միջոցառման անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի.

3) Հայ ժողովրդական երգարվեստի ու պարարվեստի մշակութային միջոցառման աշխատակարգը՝ համաձայն հավելված N3-ի.

4) Հայ ժողովրդական երգարվեստի ու պարարվեստի մշակութային միջոցառման նախահաշիվը՝ համաձայն հավելված N4-ի.

5) Հայ ժողովրդական երգարվեստի ու պարարվեստի մշակութային միջոցառման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 5-ի:

16.05.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. մայիսի 16
ք. Կապան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ մայիսի 16 -ի
N 184 -Ա որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ
Հայ ժողովրդական երգարվեստի և պարարվեստի միջոցառման

1. Հ.Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/

2. Ա.Ավագյան - ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական

3. Մ.Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

4. Ն.Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ

5. Ս.Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

6. Ա.Սիմոնյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ

7. Թ.Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

8. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ մայիսի 16 -ի
N 184- Ա որոշման

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
Հայ ժողովրդական երգարվեստի և պարարվեստի միջոցառման

- Ազգային և համամարդկային հոգևոր-մշակութային արժեքների պահպանում, զարգացում և հանրահռչակում
- Կարևորել ազգային դաստիարակության և ազգային դիմագծի պահպանման մեջ ազգային պարարվեստի և երգարվեստի անաղարտ պահպանումը և ազգային նկարագրին և հոգեբանությանը հարազատ մնալով՝ ապահովել նրա զարգացումը
- Միասնական շուրջպարի միջոցով ամուր պահել մեր արմատները, և ազգային պարը վերադարձնել ժողովրդին՝ վերստին դարձնել ժողովրդական
- Տարբեր ինքնագործ պարախմբերին մեկտեղել, պարտադրել մտածել պրոֆեսիոնալ պարի մասին
- Սերտորեն համագործակցելով մարզի տարբեր համայնքներում գործող մասնագիտացած կառույցների հետ, իրականացնել փառատոններ, մրցույթներ՝ տարբեր խորագրերով, անվանակարգերով և ուղղվածությամբ, որոնց նպատակն է ներկայացնել մեր մշակութային կյանքի գունապնակը
- Կատարողական որակի բարձրացման նպատակով հետագայում իրականացնել նաև վարպետության դասեր
- Համերգային ծրագրերի գեղագիտական դաստիարակության բաղադրիչի միջոցով բարձրաճաշակ և պատրաստված ունկնդրի և հանդիսատեսի ձևավորում
- Մարզի մշակութային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. մայիսի 16 -ի
N 184 -Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
Հայ ժողովրդական երգարվեստի և պարարվեստի միջոցառման

Միջոցառման պատվիրատուն և կատարողը.

Հայ ժողովրդական երգարվեստ և պարարվեստ միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Միջոցառման մասնակիցները և կանոնակարգը.

Միջոցառմանը մասնակցելու են մարզի համայնքներից ընդգրկված հայ ազգային և ժողովրդական պարային համույթներ, կընդգրկվեն կենդանի հնչողությամբ ժողովրդական երգերի կատարումներ՝ ժողգործիքների անսամբլի հետ համատեղ:

Մասնակից պարի խմբերը հանդիսատեսին կներկայացնեն երկու պար: Պարերից մեկը համարվում է պարտադիր կատարում և պետք է ներկայացվի Զանգեզուրյան պարարվեստի նմուշներից, իսկ Կապան քաղաքի Գարեգին Նժդեհի հուշահամալիրում միջոցառման մասնակից բոլոր խմբերը պետք է միասնական ներկայացնեն «Սյունյաց քոչարի» պարը: Պարի ուսուցման տեխնիկան և ձայնագրությունը կուղարկվի համայնքապետարանների համապատասխան ստորաբաժանման մասնագետներին:

Յուրաքանչյուր համայնք պետք է ներկայացնի մեկ ժողգործիքների անսամբլ՝ երգիչով և մեկ պարի խումբ:

Միջոցառումն անց է կացվելու մարզկենտրոն Կապան քաղաքում:

Մասնակցության համար անհրաժեշտ է նախօրոք միջոցառման կազմակերպիչներին տրամադրել ելույթ ունեցող պարային խմբերի կատարումների ձայնագրությունները:

Միջոցառման ժամկետը և վայրը.

Միջոցառումն անց է կացվելու 2023թ. մայիս ամսին, մարզկենտրոն Կապան քաղաքում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը.

Միջոցառումների անցկացման հետ կապված համայնքներից մարզկենտրոն Կապան տրանսպորտային ծախսերը հոգում են համայնքապետարանները, իսկ մնացած կազմակերպչական ծախսերը հոգում է «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմակերպական կոմիտեի կազմի հետ:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. մայիսի 16-ի
N 184-Ա որոշման

ՆԱԽԱՀԱՇԻՎ
Հայ ժողովրդական երգարվեստի և պարարվեստի միջոցառման

	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	15.0
2	Սարքերի և սարքավորումների վարձակալություն	4216	80.0
3	Հանրային սննդի ծառայություններ	4236	420.0
4	Նվերներ	4237	80.0
5	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	85.0
6	Այլ մասնագիտական ծառայություններ	4241	190.0
7	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	4261	30.0
	Ընդամենը		900.0

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված N 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. մայիսի 16-ի
N 184Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայ ժողովրդական երգարվեստի և պարարվեստի միջոցառման

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման վայրը
1.	Հայ ազգային,ժողովրդական երգարվեստի և պարարվեստի միջոցառում	Մայիսի 23	Կապան համայնք
1.1	Միջոցառման մասնակիցների դիմավորում	Մայիսի 23, ժամը 11^{00}-11^{30}	Կապանի համայնքապետարանի մշակույթի կենտրոնի հրապարակ
1.2	Պատվիրակության և մասնակիցների ծանոթացում, մտքերի փոխանակում:	ժամը 11^{30}-12^{00}	Կապանի համայնքապետարանի մշակույթի կենտրոն /փոքր դահլիճ/
1.3	Նախապատրաստական և փորձնական աշխատանքներ	ժամը 12^{00}-14^{00}	Կապանի համայնքապետարանի մշակույթի կենտրոն /մեծ դահլիճ/
1.4	Ընդմիջում /ճաշ/	ժամը 14^{00}-15^{00}	Ք.Կապան
1.5	Այցելություն Գ.Նժդեհի հուշարձան	ժամը 15^{00}-15^{30}	Ք.Կապան
1.6	Միջոցառման մեկնարկ	ժամը 15^{30}-16^{30}	Ք.Կապան Գարեգին Նժդեհի հուշահամալիր
1.7	Համերգ	ժամը 18^{00}-19^{30}	Կապանի համայնքապետարանի մշակույթի կենտրոն /մեծ դահլիճ/
1.8	Արագ սնունդ	ժամը 19^{30}-20^{00}	Ք. Կապան
1.9	Միջոցառման մասնակիցների վերադարձ համայնքներ	ժամը 20^{00}	մարզի համայնքներ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան